DOI: 10.57192/18291864–2022.4–292

«Ռոստոմի անտիպ նամակները»: Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ՝ Երուանդ Փամպուքեանի, «Վէմ» մատենաշար, թիւ 4, Եր., «Լուսակն», 2022, 732 էջ*:

Բանալի բառեր – անտիպ նամակներ, ՀՅԴ Կենտրոնական արխիվ, «Դրօշակ»–ի խմբագրություն, ՀՅԴ բյուրո, «Պատճենների մատյան», «Սևագրությունների» մատյաններ, հայ ազատամարտ:

19–րդ դարավերջի և 20–րդ դարասկզբի հայ ազատամարտի հորձանուտում ծնվել են այնպիսի բացառիկ անհատականություններ, որոնք աչքի էին ընկնում իրար հաջորդող իրադարձությունները կանխատեսելու, դրանց հնարավոր հետևանքները հաշվարկելու և բարդ իրավիճակների հաղթահարման համար ճշգրիտ որոշումներ կայացնելու ունակությամբ: Նրանցից էր ՀՅԴ հիմնադիրներից Ռոստոմը (Ստեփան Զորյան), ով, շուրջ երեք տասնամյակ լինելով հայ իրականությանն առնչվող գրեթե բոլոր առանցքային իրադարձությունների կենտրոնում, հանդես է բերել ամենաբարդ պայմաններում անգամ պայքարի մարտավարական խնդիրներն առանձնացնելու և դրանց գործնական լուծումներն ուրվագծելու անուրանալի կարողություններ: Ուստի բնական է, որ նրա կյանքին ու գործունեությանն առնչվող յուրաքանչյուր նոր վավերագրի՝ գիտական շրջանառության մեջ դրվելու փաստը դուրս է գալիս անձնական ու կուսակցական հետաքրքրությունների շրջանակից և դառնում հայոց նոր պատմության հիմնախնդիրներով զբաղվող պատմաբանների ու քաղաքագետների հետաքրքրության առարկան: Այս առումով հաճե–

* Ընդունվել է տպագրության 04.12.2022:

լի անակնկալ է ՀՅԴ պատմությանը խորագիտակ, բազմամյա հետազոտող Երվանդ Փամբուկյանի կողմից Ռոստոմի անտիպ նամակների նոր հատորի հրատարակությունը[1]:

Վերջին հարյուրամյակում Ռոստոմի վերաբերյալ տարաբնույթ հրապարակումների (փաստաթղթեր, հուշեր, ուսումնասիրություններ) պակաս չի զգացվել: Սփյուռքում դեռևս 1920-ականներից, իսկ Հայաստանում անկախության շրջանում հրատարակված բազմաթիվ ուսումնասիրություններում արժևորվել է նրա ներդրումը հայ ազատամարտում և հայոց պետականության վերականգնման գործում: Տասնամյակների ընթացքում տարբեր ձևաչափերով հրատարակվել են նաև Ռոստոմի գրչին պատկանող հոդվածներ կամ անմիջականորեն նրան առնչվող փաստաթղթեր: Այդ գործընթացի սկիզբը դրվել է նրա մահվան 10-րդ տարելիցի առթիվ «Դրօշակ»-ում հրատարակված արժեքավոր նյութերով և Ս. Վրացյանի խմբագրությամբ լույս տեսած «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան» ժողովածուի զույգ հատորներով: Ավելի ուշ այդ փաստաթղթերի մի մասը վերահրատարակվել է Հ. Տասնապետյանի, ապա Ե. Փամբուկյանի կազմած «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» բազմահատորյակի տարբեր հատորներում: Հ. Տասնապետյանը դրանք ի մի է բերել Ռոստոմի մահվան 60-րդ տարելիցի առթիվ տպագրված հատորում և 80-րդ տարելիցի առթիվ հրատարակված «Նամականի»-ում[2]:

Վերոնշյալ հրատարակություններից հետո էլ չէր բացառվում ՀՅԴ Կենտրոնական արխիվի և հատկապես տարբեր երկրների արխիվների ֆոնդերում Ռոստոմին առնչվող նոր վավերագրերի ի հայտ գալը: Բայց այն, ինչ արել է Հ. Տասնապետյանի գործը շարունակող Ե. Փամբուկյանը, վեր է բոլոր սպասելիքներից և, անկասկած, հիացմունքի է արժանի: Վերջին տասնամյակների իր համառ պրպտումների շնորհիվ նա հայտնաբերել է «Դրօշակ»-ի խմբա-

1 Տե՛ս «Ռոստոմի անտիպ նամակները»: Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ՝ **Երուանդ Փամպուքեանի**, «Վէմ» մատենաշար, թիւ 4, Եր., «Լուսակն», 2022, 732 էջ:

2 Տե՛ս «Դրօշակ», Փարիզ, 1929, N 1-2 (284-285), Յունուար-Փետրուար, «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», յաւելուած «Հայրենիք» ամսագրի, խմբ.՝ **Ս. Վրացեան**, հատ. Ա., Պոսթըն, հրատ. Հ. Յ. Դ. Ամերիկայի Կեդրոնական կոմիտէի, 1934, հատ. Բ., Պոսթըն, հրատ. Հ. Յ. Դ. Ամերիկայի Կեդրոնական կոմիտէի, 1938, **Ռոստոմ**, մահուան վաթսունամեակին առթիւ, խմբ.՝ **Հ. Տասնապետեան**, Պէյրութ, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Համազգայինի Վահէ Սէթեան տպ., 1979, **Ռոստոմ**, Նամականի. մահուան ութսունամեակին առթիւ, խմբ.՝ **Հ. Տասնապետեան**, Պէյրութ, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Համազգայինի Վահէ Սէթեան տպ., 1999:

գրության և ՀՅԴ տարբեր ղեկավար մարմինների անունից Ռոստոմի ուղարկած նամակների պատճենները, ՀՅԴ Կենտրոնական արխիվի մատյաններում պահվող՝ Ռոստոմի ձեռագրով գրված սևագիր գաղտնի հրահանգները և այլ փաստաթղթեր: Դրանց մի մասը հրատարակվել է «Վէմ» հանդեսի էջերում[3], իսկ ամբողջությամբ ընթերցողի դատին է հանձնվել գրախոսվող ժողովածուի տեսքով:

Ռոստոմի անտիպ նամակների նոր ժողովածուն բնավ չի կրկնում ժամանակին Հ. Տասնապետյանի հրատարակած «Նամականի»-ն, այլ գալիս է հարստացնելու և հնարավորինս ամբողջացնելու այն՝ բնականաբար տեղ թողնելով նաև հետագա հավելումների համար: 732-էջանոց ստվարածավալ հատորում զետեղված 735 տարաբնույթ նամակների ու գրությունների և 1917 թ. Ստոկհոլմում կայացած Սոցինտերնի կոնֆերանսին Ռոստոմի ներկայացրած «Ցիշատակագիր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» ծավալուն փաստաթղթի հարուստ բովանդակությունը թույլ է տալիս միանշանակ պնդել, որ գիտական հանրության քննությանն է ներկայացվել վավերագրերի մի հարուստ փունջ, որն անխուսափելի է դարձնում քննության առարկա ժամանակաշրջանի տարբեր հարցերի վերաբերյալ նոր մոտեցումներ մշակելու կամ կարևոր ճշգրտումներ կատարելու խնդրի լուծումը:

Ե. Փամբուկյանի այս հատորում ներառված նամակները, ըստ իրենց բնույթի և բովանդակության, պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝

1. Բոստոնի արխիվի տարբեր թղթածրարներում պահպանված և Ռոստոմի ստորագրությունը կրող նամակներ[4],

2. ՀՅԴ տարբեր մարմինների ու «Դրօշակ» պաշտոնաթերթի անունից, բայց Ռոստոմի ձեռագրով շարադրված նամակներ, որոնց մեծ մասը քաղված է «Պատճենների մատյան» կոչվող ստվարածավալ տետրերից,

3. «Սևագրություններ» խորագիրը կրող մատյաններում հայտնաբերված՝ Ռոստոմի գրչին պատկանող նամակներ: Այդ մատյաններում ներառվում էին գաղտնի հրահանգներ ու տեղեկատվություն

3 Տե՛ս «Ինչպէ՞ս կանխուեց արեւելահայութեան բնաջնջումը 1905-1906 թթ.: Ռոստոմի ծածկագիր նամակ հրահանգները», «Վէմ», Եր., 2009, N 2, էջ 125-143, «Ռոստոմի նամակ-հրահանգների սեւագրութիւնները. մահուան 100-ամեակի առթիւ», «Վէմ», Եր., 2019, N 1, էջ 297-352:

4 Տե՛ս «Ռոստոմի անտիպ նամակները», էջ 17-31, 246-251, 253-263, 558-567, 573-664:

պարունակող այն գրությունները, որոնք, գաղտնի թանաքով արտագրվելով, ուղարկվում էին Թուրքիայում և Ռուսաստանում գործող ՀՅԴ մարմիններին կամ անհատ գործիչներին:

Ե. Փամբուկյանն անշուշտ ճիշտ է վարվել, երբ այս երեք խումբ փաստաթղթերն առանձին բաժիններով չի ներկայացրել: Մասնավորապես, «Պատճենների մատյանի» տետրերից և «Սևագրությունների» մատյաններից քաղված նամակները ներկայացվում են մեջընդմեջ՝ ապահովելով դրանց հրապարակման ժամանակագրական հաջորդականությունը: Ժողովածուն դրանից միանշանակ շահում է, քանի որ հասկանալի են դառնում նամակների փոխկապակցվածությունը, քննարկվող հարցերի տրամաբանական կապը, ինչը թույլ է տալիս պատկերացում կազմել ՀՅԴ մարմիններին կամ գործիչներին ուղղված հրահանգների ու հանձնարարականների արդյունավետության մասին:

Պատմաբանների համար բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես «Սևագրությունների» մատյաններից քաղված նամակները: Դրանց հասցեատերերը պարտավոր էին բովանդակությանը ծանոթանալուց հետո անմիջապես ոչնչացնել դրանք, ուստի տրամաբանական է, որ այդ նամակների բնագրերը ժամանակին գրեթե ամբողջությամբ կորսվել են: Դա նշանակում է, որ այդ մատյաններում պահպանված գրությունները, այդ թվում՝ Ռոստոմի գրչին պատկանողները, բացառիկ սկզբնաղբյուրի արժեք ունեն: Ժողովածուում ներառված նամակների այդ խումբը մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես հայ ազատամարտում կիրառվող մարտավարության նրբություններն ընկալելու և պայքարի տարբեր դրվագների վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն քաղելու առումով:

Ժողովածուում ներառված անտիպ նամակների ընդգրկած ժամանակահատվածը լայն է՝ 1895 թ. մարտից մինչև 1918 թ. նոյեմբեր: Բովանդակային առումով որակապես առանձին խումբ են կազմում 1890-ականների երկրորդ կեսով թվագրվող առաջին 256 նամակները, որոնք թե՛ թվաքանակով, թե՛ ծավալով կազմում են ժողովածուի ավելի քան 1/3-ը[5]: Հասցեատերերի աշխարհագրական ընդգրկումը նույնպես բավականին լայն է՝ Թիֆլիս, Թավրիզ, Վան,

5 Տե՛ս նույն տեղում, էջ 17-246:

Կ. Պոլիս, Զմյուռնիա, Տրապիզոն, Կիպրոս, Եգիպտոս (Կահիրե և Ալեքսանդրիա), Բուլղարիայի տարբեր քաղաքներ, Ռումինիա (Բուխարեստ, Սուլինա, Կոստանցա), Օդեսա, Ժնև, ԱՄՆ, Ֆրանսիա (Փարիզ, Նանսի, Մարսել), Լոնդոն, Բեռլին, Վիեննա և այլն: Դրանց մեծագույն մասը հղված է «Դրօշակ»-ի խմբագրության անունից: Բայց նամակներում քննարկվող հարցերի և տրված հանձնարարականների շրջանակը շատ ավելի ընդգրկուն է, իսկ մի շարք դեպքերում կարծես դուրս է «Դրօշակ»-ի խմբագրության իրավասություններից: Ուստի հաճախ այն տպավորությունն է ստեղծվում, որ այդ խմբագրության գործերը տնօրինող Ռոստոմը միայնակ իր վրա էր վերցրել ՀՅԴ Արևմտյան բյուրոյի գործառույթները, մարմին, որը փաստացի պետք է ստեղծվեր 1898 թ. տեղի ունեցած ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովից հետո: Հայ ազատամարտում ՀՅԴ-ի կիրառած մարտավարության, օսմանյան դրամատան գրավման, դրա մասնակիցների հետագա ճակատագրի, Խանասորի արշավանքի, կուսակցությունների միավորման շուրջ վերակազմյալ հնչակյանների հետ բանակցությունների, թուրք ընդդիմադիր գործիչների հետ շփումների ու համագործակցության առաջին քայլերի, Արթին փաշա Տատյանի ներկայացուցիչների միջոցով սուլթանի հետ վարվող բանակցությունների և այլ խնդիրների վերաբերյալ վերոնշյալ նամակներում տեղ գտած հարուստ փաստական նյութը բացահայտում է այդ հարցերի նոր ծալքեր և միանշանակ մեծ հետաքրքրություն է ներկայացնում դրանցով զբաղվող մասնագետների համար:

Անտիպ նամակների անհամեմատ փոքր մի խումբ (257-276) ներառում է 20-րդ դարի առաջին տարիների (1901 թ. նոյեմբեր - 1904 թ. հունիս) գրագրությունը, այդ թվում՝ այն մի քանի ամիսների, երբ Ռոստոմը բանտարկված էր կամ Օդեսայի աքսորավայրում էր[6]: Բանտարկությանը նախորդող շրջանի նամակները մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայ ազատամարտի խնդիրներով զբաղվող մասնագետների համար: Իսկ բանտից և աքսորավայրից ուղարկված նամակները պարզորոշ վկայում են, որ անգամ նման պայմաններում Ռոստոմը դուրս չի մնացել իրադարձությունների հորձանուտից և կարողացել է իր տեսակետները հաղորդել հրատապ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ: Ուշագրավ է, որ այդ նամակնե-

6 Տե՛ս նույն տեղում, էջ 246-263:

րում նշված որոշ նկատառումներ հաշվի առնվեցին կուսակցության կողմից ծրագրային և մարտավարական ճշգրտումներ կատարելու ընթացքում:

ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողովից հետո կրկին ժնև անցած Ռոստոմը գլխավորապես ՀՅԴ Արևմտյան բյուրոյի, մասամբ էլ «Դրօշակ»-ի խմբագրության անունից 1904-1905 թթ. գրել է բազմաթիվ նամակներ (277-627), որոնք պահպանվել են «Սևագրությունների» մատյաններում և «Պատճենների մատյանի» տետրերում: Ակնհայտ է, որ ավելի քան 290 էջ ներառող այդ շուրջ 350 նամակներում տեղ գտած փաստական նյութն անհամեմատ բազմազան ու հարուստ է և արտացոլում է ՀՅԴ-ի համար որակապես նոր իրողություններ[7]:

Հայ ազատամարտի պատմությամբ զբաղվողների համար չափազանց արժեքավոր է Ռոստոմի նամակների հաղորդած հարուստ տեղեկատվությունը արյունոտ սուլթանի դեմ իրականացված մահափորձի, Զմյուռնիայում նախապատրաստվող դավադրական ձեռնարկների, Սասունի 1904 թ. ապստամբության հետևանքների, Վանի նահանգում, Կիլիկիայում, Պարսկաստանում, Եգիպտոսում և Բուլղարիայում ՀՅԴ կառույցների ծավալած գործունեության մասին: Մյուս կողմից՝ 1905 թ. հունվարից ծավալված ռուսական առաջին հեղափոխությունը, հայ-թաթարական կռիվները նոր խնդիրներ էին դնում ՀՅԴ-ի առաջ՝ ուրվագծելով նրա միանգամայն նոր գործելակերպը: Հայության զինում և ինքնապաշտպանության կազմակերպում, Ռուսաստանում գործող ռուսական և այլ հեղափոխական կազմակերպությունների հետ համագործակցություն, նրանց օգնությամբ զենքի ու զինամթերքի հայթայթում և հայաբնակ շրջաններ փոխադրում, նոր պայմաններին ՀՅԴ ծրագրի ու գործելակերպի համապատասխանեցում՝ ահա մի քանիսն այն խնդիրներից, որոնք առաջնահերթություններ էին ՀՅԴ-ի համար: Բնականաբար, այդ ամենի կիզակետում պետք է հայտնվեր **գործի մարդ** Ռոստոմը, ինչը լիովին արտացոլվել է ժողովածուում տեղ գտած անտիպ նամակներում:

Անտիպ նամակների երրորդ խումբը ժամանակագրական ընդգրկմամբ (1906 թ. մարտ – 1918 թ. նոյեմբեր) ու թվաքանակով (628-734) մեծ չէ: Դրանք ուղարկվել են Թիֆլիսից, Բաքվից, Բուլ-

7 Տե՛ս նույն տեղում, էջ 269-556:

ղարիայից, Ժնևից, Ատրպատականից, Թեհրանից, Ղազվինից, Կ. Պոլսից, Կարինից, Վանից, Փարիզից, Լոնդոնից, Ստոկհոլմից, Ցարիցինից և շոշափում են բազմազան, հաճախ հրատապ լուծում պահանջող խնդիրներ[8]: Տարբեր վայրերից հղված լինելն ինքնին պայմանավորել է այդ նամակներում արծարծվող խնդիրների բազմազանությունը՝ հայ-թաթարական կռիվներ, ՀՅԴ-ի դեմ Ռուսաստանում ծայր առած բռնություններ, ՀՅԴ-ի մասնակցությունը իրանական հեղափոխությանը, թուրք ընդդիմադիր ուժերի հետ համագործակցություն, երիտթուրքական հեղաշրջում, ՀՅԴ-«Իթթիհատ» ոչ միանշանակ հարաբերություններ, հայ ազատամարտի մարտավարության փոփոխություն, արևմտահայերի ինքնապաշտպանության նախապատրաստմանն ուղղված քայլեր, կամավորական շարժման կազմակերպում, գաղթական և աքսորյալ արևմտահայերին որևէ կերպ օգնելու փորձեր, Հայկական հարցը միջազգային հանրությանը, այդ թվում՝ Սոցինտերնի քննարկմանը ներկայացնելու փորձեր և այլն:

Ժողովածուի վերջում որպես հավելված հրապարակվել են 1917 թ. Ստոկհոլմում կայացած Սոցինտերնի համաժողովին Ռոստոմի՝ ՀՅԴ-ի անունից ներկայացրած «Յիշատակագիր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» արժեքավոր վավերագիրը և դրան առնչվող այլ գրություններ, որոնք բովանդակային առումով ամբողջացնում են ժողովածուն[9]: Դրանց միջոցով ընկերվար հանրության ուշադրությանն էր ներկայացվում համակողմանի տեղեկատվություն Մեծ եղեռնի, հայկական դիմադրության հերոսական դրվագների, արևմտահայ մտավորականներին բաժին ընկած դառը ճակատագրի, աքսորավայրերում տարագիր հայության բեկորների ծանր վիճակի, նրանց հրատապ օգնություն ցուցաբերելու անհրաժեշտության մասին, և հիմնավորվում էր աշխարհամարտից հետո Հայկական հարցի արդարացի լուծման անհրաժեշտությունը: Հիշատակագրում տեղ գտած հարուստ փաստական նյութը վկայում է ստեղծված իրավիճակին Ռոստոմի քաջատեղյակ լինելու մասին: Ուշագրավ է, որ հայտնի փաստերի կողքին այս փաստաթղթում կա բացառիկ տեղեկատվություն Մեծ եղեռնին զոհ դարձած առանձին

8 Տե՛ս նույն տեղում, էջ 558-665:
9 Տե՛ս նույն տեղում, էջ 668-729:

գործիչների ճակատագրի մասին: Օրինակ՝ ՀՅԴ նշանավոր գործիչ, օսմանյան խորհրդարանի պատգամավոր Ա. Վռամյանի (Օ. Դերձակյան) վախճանի հանգամանքների մասին ուշագրավ տեղեկատվությունը[10] հիմնականում հաստատում է տարիներ առաջ մեր կողմից շրջանառության մեջ դրված փաստերը[11]:

Գրախոսվող ժողովածուն գիտական նշանակալից արժեք ունի: Գնահատելի են նաև Ե. Փամբուկյանի տված ծանոթագրություններն ու պարզաբանումները, որոնք թույլ են տալիս հնարավորինս ճիշտ ընկալել տպագրված նամակների՝ առաջին հայացքից մշուշոտ թվացող հատվածները: Ժողովածուում երբեմն հանդիպող վրիպակներն աննշան են, ուստի հարկ չենք համարում անդրադառնալ դրանց: Համոզված ենք, որ գրախոսվող ժողովածուն իր վրա կհրավիրի 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի պատմության հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների ուշադրությունը, իսկ Ե. Փամբուկյանն իր անխոնջ գործունեությամբ ապագայում ևս նոր ու հաճելի անակնկալներ կմատուցի գիտական հանրությանը:

Հովիկ Բ. Գրիգորյան
Պատմ. գիտ. թեկնածու

Հովիկ Բ. Գրիգորյան – գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական շարժման պատմության հիմնախնդիրները: Հրապարակել է 2 մենագրություն ու բազմաթիվ հոդվածներ ՀՅԴ հեղափոխական պայքարի մարտավարության և հայ ազատամարտի զինման ու ֆինանսավորման խնդիրների վերաբերյալ:

Էլ. հասցե՝ hovgrig@gmail.com

10 Տե՛ս նույն տեղում, էջ 715:
11 Տե՛ս **Գրիգորյան Հ.**, Հովակիմ Շահբազյանի «Դատվան» անտիպ հուշագրությունը, «Հայագիտության հարցեր», Եր., ԵՊՀ հրատ., 2015, N 3, էջ 58:

Summary

“Rostom's unpublished letters”. Prepared for publication, edited and commented by Yervand Pamboukian, series "Vem" № 4, Yerevan, publishing house "Lusakn", 2022, 732 pages

Hovik B. Grigoryan
Candidate of Historical Sciences

Keywords – unpublished letters, central archive of ARF Dashnaktsutyun, editorial office of "Droshak", ARF Dashnaktsutyun Bureau, "Journal of Copies", Journal of "Drafts", Armenian liberation struggle.

One of the founders and key figures of ARF Dashnaktsutyun, Rostom (Stepan Zoryan) was one of the influential figures of the Armenian social and political thought of his era, who was always in the center of events related to the Armenian society. Therefore, putting new documents related to him into scientific circulation goes beyond personal and party spheres, and becomes the subject of interest of historians and political scientists.

The collection under review includes Rostom's unpublished letters found in the Central Archive of ARF Dashnaktsutyun, which was presented for publication by Yervand Pambukyan, a long-time and well-aware researcher of the history of ARF Dashnaktsutyun. It by no means repeats or incorporates the rich documentation on Rostom published up to that point, but comes to complement them as much as possible. Acquaintance with the content of more than 735 letters included in it, as well as the document "Memorandum of Armenian Revolutionary Federation Dashnaktsutyun" included as an appendix allows us to claim that a rich collection of documents has been presented to the public, which will necessarily bring to the agenda the imperative of developing new approaches to various history issues or making important adjustments, and will allow to develop a new approach not only to Rostom, but also to the deep activities of ARF Dashnaktsutyun in general.

The letters included in the collection are divided into three groups according to their nature and content: letters bearing Rostom's signature, letters taken from notebooks titled "Journal of Copies", written in the name of various bodies of ARF Dashnaktsutyun but in Rostom's handwriting, and letters belonging to Rostom's pen found in journals titled "Drafts". The letters extracted from the journals titled

"Drafts" are of exceptional source value. These letters, containing party and revolutionary secret instructions and information, were copied in secret ink and sent to individuals or bodies of ARF Dashnaktsutyun operating in Turkey and Russia. The originals of these letters were almost completely destroyed at the time.

The chronological and geographical scope of the letters included in the collection is wide, and the issues discussed in them are rich and diverse in terms of content. It is of great interest, especially in terms of understanding the nuances of the tactics used in the Armenian liberation struggle and gathering correct information about various episodes of the struggle.

As a whole, the collection of Rostom's unpublished letters has significant scientific value and will surely attract the attention of specialists dealing with issues of the Armenian political history of the late 19th and early 20th centuries.

Резюме

«Неопубликованные письма Ростома»: подготовка к публикации, редактирование и примечания Ерванда Памбукяна, серия «Вэм», N 4, Ереван, издательство «Лусакн». – 2022, 732 с.

Овик Б. Григорян
Канд. ист. наук

Ключевые слова - неопубликованные письма, Центральный архив АРФ Дашнакцутюн, редакция «Дрошака», Бюро АРФ Дашнакцутюн, «Книга копий», журналы «Черновиков», армянская освободительная борьба.

Ростом (Степан Зорьян) – один из основателей и ключевых деятелей АРФ Дашнакцутюн, был влиятельным фигурантом армянской общественно-политической жизни и всегда находился в центре событий, связанных с армянским национально-освободительным движением конца 19-ого и начала 20-ого вв. Поэтому публикация новых документов о жизни и деятельности Ростома выходит за рамки личных и партийных интересов и становится предметом пристального внимания историков и политологов.

В рецензируемый сборник вошли неопубликованные письма Ростома, найденные в Центральном архиве АРФ Дашнакцутюн, который представил к печати многолетний исследователь истории АРФ Дашнакцутюн Ерванд Памбукян. Сборник никоим образом не повторяет опубликованные ранее документы

о жизни и деятельности Ростома, а максимально дополняет их. Ознакомление с содержанием включенных в сборник более 735 писем и прилагаемого к ним документа «Меморандум Армянской Революционной Федерации» позволяет утверждать, что нашим читателям представлен богатый пакет документов, которые порождают необходимость выработки новых подходов или внесения важных коррективов в различные вопросы истории Армении, а также позволяют историкам по-новому подойти к истории революционной деятельности не только Ростома, но и АРФ Дашнакцутюн в целом.

Документы, вошедшие в сборник, по своему характеру и содержанию делятся на три группы: письма за подписью Ростома, написанные рукой Ростома письма, извлеченные из тетрадей под названием «Книга копий» и адресованные различным органам АРФ Дашнакцутюн и, письма, найденные в различных томах журналов под названием «Черновики» и принадлежащие перу Ростома. Как первоисточники особенно ценны письма, извлеченные из журналов «Черновики», которые в качестве записок, содержащих секретные инструкции и сведения, переписывались секретными чернилами и отправлялись действующим в Турции и России отделениям или деятелям АРФ Дашнакцутюн.

Широк хронологический и географический охват писем, вошедших в сборник, а вопросы, обсуждаемые в них, разнообразны по содержанию. Это представляет большой интерес, особенно с точки зрения понимания тактики АРФ Дашнакцутюн, используемой в разные периоды армянской национально-освободительной борьбы.

В целом сборник неопубликованных писем Ростома имеет большую научную ценность и непременно привлечет внимание специалистов, занимающихся вопросами политической истории Армении конца XIX и начала XX вв.

REFERENCES

1. “Diwan H. Y. Dashnakts‘ut‘ean”, yaweluats “Hayrenik‘” amsagri, khmb.` **S. Vrats‘ean**, hat. A., Post‘ĕn, hrat. H. Y. D. Amerikayi Kedronakan komitēi, 1934, hat. B., Post‘ĕn, hrat. H. Y. D. Amerikayi Kedronakan komitēi, 1938 (**In Armenian**).
2. “Drōshak”, P‘ariz, 1929, Yunuar-P‘etruar, N 1-2 (284-285) (**In Armenian**).
3. “Ṛostomi antip namaknerĕ”: Hratarakut‘ean patrastut‘iwn, khmbagrut‘iwn yew tsanōt‘agrut‘iwnner` **Yeruand P‘ampuk‘eani**, “Vēm” matenashar, t‘iw 4, Yer., “Lusakn”, 2022 (**In Armenian**).
4. “Ṛostomi namak-hrahangneri sewagrut‘iwnnerĕ. mahuan 100-ameaki aṛt‘iw”, “Vēm”, Yer., 2019, N 1, ēj 297-352 (**In Armenian)**.
5. **Grigoryan H.**, Hovakim Shahbazyani “Datvan” antip hushagrut‘yunĕ, “Hayagitut‘yan harts‘er”, Yer., YEPH hrat., 2015, N 3 (6), ēj 52-60 (**In Armenian**).
6. **P‘ampuk‘ean Ye.**, Inch‘pēs kankhuets‘ arewelahayut‘ean bnajnjumĕ 1905-1906 t‘t‘.: Ṛostomi tsatskagir namak hrahangnerĕ, “Vēm”, Yer., 2009, N 2, ēj 125-143 (**In Armenian**).

7. **Ṛostom**, Namakani, mahuan utʻsunameakin aṛtʻiw, khmb.` **H. Tasnapetean**, Pēyrutʻ, hrat. H. Y. Dashnaktsʻutʻean, Hamazgayini Vahē Sētʻean tp., 1999 (**In Armenian**).
8. **Ṛostom**. mahuan vatʻsunameakin aṛtʻiw, khmb.` **H. Tasnapetean**, Pēyrutʻ, hrat. H. Y. Dashnaktsʻutʻean, Hamazgayini Vahē Sētʻean tp., 1979 (**In Armenian**).